

Հաստատված է

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՍԱՐԿԵՏ» Սահմանափակ
Պատասխանատվությամբ Ընկերության
մասնակիցների ընդհանուր ժողովում
« 19 » հունիսի 2008թ.

Ժողովի նախագահ՝ Տ. Խանիկյան

(ստորագրություն)

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՍԱՐԿԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ,
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ք. ԵՐԵՎԱՆ
2008թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ընթացակարգն ուղղված է ապահովելու՝

- 1.1.1. Ընկերության և Ընկերության հաճախորդների շահերի գերակայության ապահովումն Ընկերության աշխատակիցների և ղեկավարների կամ վերջիններիս հետ փոխկապված անձանց անձնական շահերի նկատմամբ,
- 1.1.2. Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը,
- 1.1.3. Ընկերության ղեկավարների և աշխատակիցների պարտավորությունները՝ գործելու ազնիվ և անկողմնակալ Ընկերության և Ընկերության հաճախորդների ու գործընկերների հետ:

2. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. Հաճախորդ՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Ընկերությունն ունի ներդրումային ծառայությունների մատուցման գործող պայմանագիր:
- 2.2. Շահերի բախում՝ ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող հակասություն Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց միջև առաջացող գույքային և/կամ այլ շահերի հակասություն, որի արդյունքում Ընկերության և/կամ Ընկերության աշխատակիցների գործողությունները կամ անգործությունը առաջացնում են վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ Հաճախորդի և/կամ Ընկերության համար:
- 2.3. Ընկերության ղեկավար և/կամ աշխատակից՝ Ընկերության ղեկավար և/կամ աշխատակից և/կամ նրանց հետ փոխկապակցված անձ:

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊԶԵՐԸ

- 3.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերը հետևյալն են՝
 - 3.1.1. Ընկերության աշխատակցի և/կամ ղեկավարների կողմից իրենց օգտին ի վնաս Ընկերությանը և/կամ Ընկերության Հաճախորդի գործարքների կնքում,
 - 3.1.2. Հաճախորդին և/կամ Ընկերությանը պատկանող միջոցների չարտոնված օգտագործում ի շահ Ընկերության աշխատակիցների և/կամ ղեկավարների,
 - 3.1.3. Ընկերության աշխատակցի և/կամ ղեկավարների կողմից իրենց օգտին ի վնաս Ընկերությանը, Ընկերության և/կամ Ընկերության Հաճախորդի Ինառայողական տեղեկատվության օգտագործում,
 - 3.1.4. Վերոնշյալ դեպքերի ցանկը սպառնիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև Շահերի բախման այլ դեպքերով:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 4.1. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Ընկերության համապատասխան իրավասություններ ունեցող ղեկավարները և աշխատակիցները պարտավոր են՝
 - 4.1.1. պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին կանոնակարգերի պահանջները,
 - 4.1.2. վեր դասել Ընկերության և Ընկերության հաճախորդների շահերը սեփականից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Ընկերության շահերի վրա,

- 4.1.3. ապահովել ներդրողների (հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը,
- 4.1.4. իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել համապատասխան կառավարման մարմիններին (ներքին կամ արտաքին) ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին ընթացակարգերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Ընկերությունը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս ընկերությունը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս Ընկերությունը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Վերոնշյալ շահերի պաշտպանման նպատակով Ընկերության համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

- 5.1.1. չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Ընկերության կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,
- 5.1.2. Հաճախորդի շահերը համարել գերակա Ընկերության շահերի նկատմամբ՝ հաճախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ,
- 5.1.3. Հաճախորդների պատվերների համաձայն իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,
- 5.1.4. կնքել գործարքներ բացառապես Հաճախորդների հետ կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող կանոններով սահմանված կարգով,
- 5.1.5. գանձել միջնորդավճարներ, համաձայն Ընկերության գործող սակագների
- 5.1.6. բացահայտել ղեկավարներին իրենց և Ընկերության կամ Հաճախորդի միջև առկա շահերի բախման մասին:

6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՅԱՌՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6.1. Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում Ընկերության ղեկավարների և/կամ աշխատակիցների և Հաճախորդների ու Ընկերության միջև հնարավոր Շահերի բախման բացառման նպատակով Ընկերությունում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

- 6.1.1. Ընկերության ղեկավարների և աշխատակիցների, Ընկերության և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին ընթացակարգերով սահմանված կարգով,
- 6.1.2. Ընկերության համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել իրենց սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Ընկերության և/կամ Հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է Ընկերության և/կամ հաճախորդի շահերից և այն չի խոչնդոտում վերջինիս պատվերի կատարմանը,
- 6.1.3. Ընկերության աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և փոխանակման՝ ՀՀ

օրենսդրությամբ և Ընկերության ներքին ընթացակարգերով սահմանված պահանջներին,

- 6.1.4. Ընկերության աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի վերջնական նպատակն է բարենպաստ պայմաններով իրենց համար գործարքների կնքելը,
- 6.1.5. Շահերի բաշման առկայության դեպքում Ընկերության անունից գործարքը կնքում է այն իրավասու աշխատակիցը, որը տվյալ գործարքում չունի շահերի բախում: Այդպիսի աշխատակից չլինելու դեպքում գործարքը հաստատվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:
- 6.3. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ և ներքին ակտերով սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ Հաճախորդներին վերջիններիս արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով, բայց չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կազմից:

7. ԵԶՐԱՓՈՒԿ ԳՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի է դարձել ներդրումային ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման մասին տեղեկատվություն, պարտավոր է տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Ընկերության ներքին ատղիտն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին՝ համապատասխան ընթացակարգով սահմանված կարգով:
- 7.2. Սույն Ընթացակարգով սահմանված դրույթների պահպանման նկատմամբ հսկողությունը իրականացվում է Ընկերության ներքին ատղիտորի կողմից:
- 7.2. Սույն Ընթացակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են իրավասու կառավարման մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո: